ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 11

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.19854ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 31-րդ, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին կետերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշումը, ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 29.01.2020 թվականի թիվ 3 դրական եզրակացությունը, Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0,19854 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (կադաստրային ծածկագիրը՝ 10-006-0029-0039) հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության՝ ֆուտբոլի խաղադաշտ կառուցելու համար:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՁԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 10

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 120 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի «2020 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 120 որոշման հավելվածի 21-րդ կետից հետո ավելացնել նոր կետեր.

22. Արենի համայնքում գործող մանկապարտեզ հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել մեկ երեխայի համար ամսական 4000 ՀՀ դրամ,

23. Արենի համայնքի Աղավնաձորի արվեստի դպրոց հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել մեկ երեխայի համար ամսական 3000 ՀՀ դրամ,

24. Կիրառել արտոնություններ.

ա) Մանկապարտեզ և արվեստի դպրոց հաճախող երկկողմանի ծնողազուրկ երեխաներին ազատել վարձավճարից,

բ) Մեկ ընտանիքից արվեստի դպրոց կամ մանկապարտեզ հաճախող երեք և ավելի երեխաների դեպքում, մեկ երեխային ազատել ծնողական վճարից,

գ) Արվեստի դպրոցի երեք խումբ հաճախող երեխաներին ազատել մեկ խմբի վարձավճարից,

դ) Առաջարկել համայնքի ղեկավարին սոցիալական ծանր կացության մեջ հայտնված ընտանիքներին, իրենց դիմումի համաձայն, ազատել տեղական վճարներից հանձնաժողովի ուսումնասիրության և դրական եզրակացության առկայության դեպքում:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ